***Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «ՀՀ ԿԳՄՍՆ Չարենցավանի Մ.Մաշտոցի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի Նախական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչ /զինղեկ/– 1 դրույք և ՆԶՊ ուսուցչի( 11 դասաժամ), մաթեմատիկայի ուսուցչի –(22դասաժամ), քիմիա ուսուցչի – ( 7դասաժամ) , ֆիզկուլտուրայի ուսուցչի– (22 դասաժամ) թափուր տեղերի համար :***

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 7.09.2022թ. մինչև 20.09.2022թ--ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 14:00-ին**, Չարենցավանի Մ.Մաշտոցի անվան ավագ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, Քոչարի 50

Տեղեկությունների համար զանգահարել **0226 4-34-92** հեռախոսահամարով: